Digitally signed by GRIGORYAN
KARINE 5210610357
Date: 2023.09.07 13:45:06 AMT

Պլան

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ. Քոչարյանի անվ. N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ- ի ուսումնադաստիարակչական աշխատանքների (2023 - 2024 ուստարի)

Հաստատվել է <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ. Քոչարյանի անվ. N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 2023թվականի օգոստոսի 29-ին կայացած մանկավարժական խորհրդի N5 նիստում

ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 2023– 2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

Ուսումնադաստիարակչական գործընթացին մասնակցում են բոլոր նրանք, ովքեր պատասխանատվություն են կրում ստանձնած գործի նկատմամբ: Ներդպրոցական ղեկավարության էությունն ու արդյունավետությունն ապահովվում է ուսուցման բոլոր ներքոհիշյալ օղակների ճշգրիտ, փոխկապակցված և ստեղծագործական աշխատանքով.

1. Դպրոցի կառավարման խորհուրդը, դպրոցի մանկավարժական խորհուրդը և տնօրենը
2. Առարկայական մեթոդական միավորումները
3. Ուսուցիչները, դասղեկները 4. Ծնողական խորհուրդը
5. Աշակերտական խորհուրդը

Դպրոցի ուսուցման լեզուն գրական հայերենն է:

Դպրոցի ուսումնական գործընթացն 2023-2024 ուսումնական տարում իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 27.07.2023թ. N 98-Ն հրամանով հաստատած օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմված դպրոցի ուսումնական պլանով , հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով , ծրագրերով և այլ իրավական ակտերով:

1. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2023թ. սեպտեմբերի 1ին, ավարտվում 2024թ. մայիսի 24-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթով՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից իններորդ դասարանների համար։

2. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը։

3. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները,բացառությամբ առաջին դասարանում սովորողների :

4. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանով հաստատված կարգի: 5. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տևողությունը 45 րոպե է:

6. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:
7. Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-9-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2023թ. հոկտեմբերի 23-ից հոկտեմբերի 29-ը ներառյալ, ձմեռային՝ 2023թ. դեկտեմբերի 25-ից 2024թ. հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2024թ. մարտի 25-ից 31-ը ներառյալ:
8. Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2023թ. հոկտեմբերի 16ից հոկտեմբերի 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023թ. դեկտեմբերի 25-ից 2024թ. հունվարի 21-ը ներառյալ, գարնանայինը՝ 2024թ. մարտի 18-ից 31-ը ներառյալ:
9. Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2023թ. հոկտեմբերի

23-ից հոկտեմբերի 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023թ. դեկտեմբերի 25-ից 2024թ. հունվարի 21-ը ներառյալ և գարնանայինը՝ 2024թ. մարտի 25-ից 31-ը ներառյալ:

Դասերը սկսվում են 9:00-ին՝ հետևյալ ժամանակացույցով.

1-ինդաս	09:00-09:45
2-րդ դաս	09:55-10:40
3-րդ դաս	10:50-11:35
4-րդ դաս	11:55-12:40
5-րդ դաս	12:50-13:35
6-րդ դաս	13:45-14:30
7-րդ դաս	14:40-15:25

Դպրոցի աշխատանքի գերակայությունները 2023-2024 ուսումնական տարում

- ✓ Կրթություն, զարգացող անհատականություն.
- ✓ առողջ ապրելակերպի ձեւավորումը, ստեղծել առողջության կողմնորոշման և կրթական գործունեության ուղղվածության համակարգ.
- ✓ կրթության բովանդակությունը՝ ապահովելով որակական մակարդակը.

- ✓ Անհատական մոտեցում մանկավարժներին, աշակերտներին, ծնողներին
- ✓ կրթական համակարգի զարգացում
- ✓ շարունակականության ապահովումը ուսումնական գործընթացում
- ✓ կրթական միջավայրի հզորացում դպրոցում:.

Նպատակը - Ստեղծել ժամանակակից կրթական , ազգային կրթության ռազմավարության նախաձեռնություն, որի շնորհիվ հաստատության շրջանավարտը հասնելու է նոր որակի: Նպատակները .

- պահպանել և բարելավել ուսումնական գործընթացում մասնակիցների առողջությունը.
- անցում և ուսուցում՝ ըստ կրթական չափորոշիչների,
- աջակցություն շնորհալի և տաղանդավոր երեխաներին:
- ուսուցչի մասնագիտական ներուժի հզորացում.
- հաստատության լաբորատորիաների և ռեսուրսների բարելավում եւ զարգացում;
- կրթական և ուսուցման գործընթացի ամբողջական մոտեցում և իրականացում.

Ակնկալվող արդյունքները

- կրթական, ֆիզիկական, հոգեբանական դաստիարակության մեկտեղում աշակերտների որակյալ կրթություն ստանալու,առողջության պահպանման լավագույն պայմաններ ստեղծելու համար.
- յուրաքանչյուր աշակերտի կարիքների հիման վրա՝ ըստ իր ունակությունների, շահերի, կրթական և ճանաչողական կարողությունների անհատական և տարբերակված ուսուցում կազմակերպելու համար տեխնոլոգիաների զարգացում և իրականացում:
- անհատի ձևավորումն ու զարգացումն ապահովող համալիր բարենպաստ պայմանների ստեղծում, որտեղ կարևորվում է հատկանիշներ՝ նախաձեռնություն, ստեղծագործաբար մտածելու , ստեղծագործական լուծումներ գտնելու կարողություն, պատրաստակամություն սովորելու ամբողջ կյանքում:
- ստեղծագործական կազմի ստեղծում, ուր կլինեն պլանավորման և ծրագրավորման, նորարարությունների փորձարկման նախաձեռնություններ, որոնք կնպաստեն մանկավարժական մասնագիտական հմտությունների զարգացմանը.

Բաժին 1

Հիմնական պարտադիր կրթության իրականացում

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	Կատարել համայնքի կողմից հաստատված տարածքի 6-15 տարեկան տղաների ու աղջիկների հաշվառում և ընդգրկում ուսման մեջ		տնօրեն, ուսուցիչներ	կատարվել է
2	Պայմաններ ստեղծել դպրոցում սոցիալապես անապահով և անբարենպաստ ընտանիքների համար: Այդ ընտանիքների երեխաներին ապահովել անվճար դասագրքերով և գրենական պիտույքներով:	ուստարվա ընթացքում	տնօրինություն, դասղեկ, ծնողական խորհուրդ, քաղաքապետ, ԴԱԿ	
3	Խիստ վերահսկողություն սահմանել սիստեմատիկ ուշացումների և անհարգի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք:	ուստարվա ընթացքում	տնօրինություն, դասվարներ, դասղեկներ	
4	Ուշադրության կենտրոնում պահել ծույլ և վատ սովորող աշակերտներին: Հաճախակի զրույցներ ունենալ նրանց և խնամակալների հետ:	ուստարվա ընթացքում	տնօրինություն, դասղեկներ, ծնողական խորհուրդ	
5	Հատուկ աշխատանք տանել 5-9 դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ:	ուստարվա ընթացքում	տն. տեղակալ դաստ. գծով, ծնող. խորհ. դասղեկ	
6	Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհրդի նախագահներին և խորհուրդներին:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
7	Ցածր առաջադիմություն	ուստարվա ընթացքում	դաստ. գծով փոխտնօրեն,	

	ունեցող աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել արտադպրոցական խմբակներում, ակումբներում, սեկցիաներում:		դասղեկներ	
9	Հիմնական դպրոցում աշակերտների ընդունելություն իրականացնելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծել հասարակական հիմունքներով աշխատող մանկավարժների խորհրդատվական խումբ:	օգոստոս	տնօրեն, փոխտնօրեններ	
10	Հիմնական դպրոցի դասարանների երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար:	օգոստոս	տնօրեն, փոխտնօրեններ	

ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԲԱԺԻՆ 2

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, այն հարստացնել մեթոդական, մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև նոր չափորոշիչներով պայմանավորված առարկայական ծրագրերով ,մեթոդական ուղեցույցներով,փեռնարկներով:	օգոստոս-սեպտեմբեր	ուսումն. գծով փոխտնօրեն, գրադարանի վարիչ	
2	Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբերի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային	օգոստոս	տնօրեն, փոխտնօրեն մ/մ նախագահներ	

ա.	տարեկան գործունեությունը՝ հանրակրթական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Հանձնարարել՝ Առարկայական մասնախմբերում քննարկել ՀՊՉ-ի հետ կապված նոր առարկայական ծրագրերի ,ուղեցույցների ,ողջ գործընթացի հարցը, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայական մասնախմբերի աշխատանքային պլանները և ներկայացնել հաստատման,	օգոստոս	տնօրեն	
բ.	Ներկայացնել ուսումնական պլանի դպրոցական , անհատական բաղադրիչներին հատկացված առարկայացանկը,նախագծային աշխատանքների թեմաների ,խմբակների,« Երկարօրյայի» ծրագրին դպրոցի կողմից հատկացվելիք ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկություններ,	օգոստոս	ուսումն. գծով փոխտնօրեն	
գ.	Ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Թեմատիկ պլաններում նոր առարկայական չափորոշչային պահանջների համապատասխանության և պլանի լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն (գրավոր) տնօրինությանը:	սեպտեմբերի 1-10	ուսումն. գծով փոխտնօրեն	
3	Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունը կատարած	ամիսը մեկ անգամ	տնօրեն, փոխտնօրեն	

	աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարությունների, անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: Քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հիմնահարցեր:			
4	Դասղեկների աշխատանքները կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել 1-9 -րդ դասարանների դասղեկների միավորումներ: Պլանները ներկայացնել հաստատման՝ նշված ժամանակահատվածում: Տարրական դպրոց- Միջին դպրոց-	օգոստոս 25.08-10.09.2023թ.	Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն	
5	Կատարել դասալսումներ՝ միջին հաշվով շաբաթական 12-14 ժամ/տնօրեն՝ 2, փոխտնօրեն՝ 4, առարկայական մասնախմբի նախագահ՝ 2-3/: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություն-հանձնարարություններ: Դիտողությունները և հանձնարարությունները գրանցել ուսուցչի աշխատանքային գործունեությունը բնութագրելու համար հատկացված «Դիտողությունների և առաջարկությունների գրանցման» մատյանում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեն, մասնախմբերի նախագահներ	
6	Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին: Նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն:	ուստարվա ընթացքում	Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, առարկայական մասնախմբերի նախագահներ	
7	Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման տասը	տարվա ընթացքում	տնօրինություն, առարկայական մասնախմբի	

	միավորանի սանդղակի վերաբերյալ մեթոդական ցուցումների կիրառումը: Անհրաժեշտության դեպքում ստեղծել թեմատիկ հարցաշարեր / հարցաշարերի բանկ/ և հաճախ 5-րդ, 7-րդ դասարաններում անցկացնել դասալսումներ ՀՊՉ-ի փոփոխությունների հետ կապված:Աշակերտների գիտելիքները ստուգել նաև համակարգիչների միջոցով: Կիսամյակի ընթացքում հիմն. դպրոցում առնվազն երկու անգամ բոլոր առարկաներից կազմակերպել թեմատիկ ստուգումներ՝ տնօրինության ներկայացուցչի կամ առարկայական մասնախմբի նախագահի մասնակցությամբ:		նախագահ, ուսուցիչներ	
8	Հարստացնել դպրոցի լաբորատորիաները: Հետևել, որպեսզի դասը հագեցված լինի զանազան ուսումնադիտողական նյութերով, լաբորատոր սարքավորումներով՝ կարևորելով տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
9	Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեն, ԴԱԿ, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ	
10	Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ: Այդ նպատակով հրավիրել բարձրորակ մասնագետներ այլ հաստատություններից, բուհերից, ԳԱ-ից, ԿԱԻ-ից, գիտահետազոտական ինստիտուտներից, ԳԹԿ-ից:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
11	Պահանջել, որպեսզի	ուստարվա	տնօրեն,	

	յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական տարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդական-մանկավարժական, առարկայական բնույթի զեկուցումով: Այն քննարկել առարկայական մասնախմբում:	ընթացքում	մասնախմբի նախագահ	
12	Ուսումնասիրել 2-րդ , 5-րդ ,7-րդ դասարաններում պարապող ՀՊՉ-ի ,վերապատրաստում անցած ուսուցիչների աշխատանքը ,քննարկել մեթոդմիավորումներում: Գործընթացի մեջ հաջողված ուսուցիչների փորձը տարածել դպրոցում: Այն իրականացնել «Հետազոտական դպրոց, մանկավարժական լաբորատորիա» ներդպրոցական միավորման անդամների և առարկայական միավորումների նախագահների միջոցով:	մշտապես	տնօրեն, ուսումն. գծով փոխտնօրեն,մ/մ նախագահներ	
13	Ստեղծել առաջավոր փորձի դպրոցներ, փնջային մեթոդմիավորումներ, ընդգրկել ինչպես ուսումնական հաստատության, այնպես էլ մարզի դպրոցների մանկավարժներին: Այս գործում ակնկալել մարզային կրթության վարչության և ԿԱԻ մարզային մասնաճյուղի աշխատակիցների օժանդակությունը և մասնակցությունը:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
14	Մանկավարժական խորհրդում ներկայացնել զեկուցումներ /նշել թեմաների վերնագրերը, ժամկետը և պատասխանատուի անունը/: առնվազն՝ 5-6 զեկուցում:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
15	Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննությունների նախապատրաստելու համար:	մայիս	տնօրեն, ուսումն. գծով փոխտնօրեն	
16	Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել	մայիս	տնօրեն, ուսումն. գծով փոխտնօրեն	

	քննական կարգացուցակը՝ քննությունները սկսելուց առնվազն 10 օր առաջ:			
17	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
18	Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության և գիտության ,մշակույթի, սպորտի նախարարության հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
19	Յուրաքանչյուր առարկայական մասնախմբից ուսումնասիրել 2-3 ուսուցչի աշխատանքային գործունեությունը, արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ առարկայական մասնախմբում՝ տալով համապատասխան գնահատական: Հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվն իր գործունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող ընդհանրական պահանջները:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեն	

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԲԱԺԻՆ 3

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով:	օգոստոս	Տնօրեն, փոխտնօրեն, առարկայական մասնախմբեր	
2	Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով ուսուցումը կազմակերպել հնարավորության դեպքում կաբինետային համակարգով, հարստացնել դպրոցի ուսումնանյութական	ուստարվա ընթացքում	տնօրեն	

	բազան, օգտագործել առկա տեխնիկական միջոցների ողջ հզորությունը:			
3	Աշխատանք տանել կաբինետները և դասարանները անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ:	օգոստոս-սեպտեմբեր	տնօրեն, կաբինետների վարիչներ	
4	Ուսուցիչների համար կազմակերպել համակարգչային դասընթացներ՝կատարելագործելով համակարգչային գիտելիքները:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ինֆորմատիկայի ուսուցիչ, համակարգչային կաբինետի վարիչ	
5	Ստեղծել «Մասնագիտական զարգացման դպրոց»՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար:	ուստարվա ընթացքում	Տնօրեն, դասղեկներ	
6	Սովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել, առաջարկություններն ու դիտողությունները գրանցել նաև ուսուցիչների աշխատանքային գործունեությունը բնութագրող՝ «Դիտողությունների և առաջարկությունների գրանցման» մատյանում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուս. գծով փոխտնօրեն, մ/մ նախագահներ	
7 ա. բ. գ.	Կատարել առարկայական ուսումնասիրություններ, արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում, տնօրինության խորհրդակցություններում կամ կոլեկտիվի ժողովում: Ուսումնասիրել՝ առարկայի դրվածքը /1-9-րդ դասարաններում/ ՏՀՏ-ի օգտագործումը դասերին նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների իրականացումը	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուս. գծով փոխտնօրեն, մ/մ նախագահներ տնօրեն, փոխտնօրեն, մասնախմբի նախագահ	
8	Ուսումնասիրել լաբորատոր գործնական աշխատանքների ծրագրային պահանջների կատարման ընթացքը բնագիտական առարկաներից:	դեկտեմբեր, մայիս	փոխտնօրեն, մ/մ նախագահ	
9	Կազմակերպել առարկայական	ուստարվա	փոխտնօրեն,	

ա. բ. գ.	շաբաթներ, միամսյակներ, Առարկայական միամսյակներին՝ կազմակերպել ցերեկույթներ, բաց դասեր, լույս ընծայել պատի թերթեր, հրավիրել մասնագետներ տարբեր ուսումնական հաստատություններից:	ընթացքում	մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ	
10	Միջին դասարաններում անցկացնել գիտագործնական կոնֆերանսներ աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ:	հունվար, ապրիլ	տնօրեն, փոխտնօրեն	
11	Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ: Առարկայական օլիմպիադաներին նախապատրաստել ուստարվա սկզբից:	դեկտեմբեր	տնօրեն, հանձնաժողով, ուսումն. աշխ. գծով փոխտնօրեն, մասնախմբերի նախագահներ	
12	Անցկացնել «Գիտակների մրցույթ»:	հոկտեմբեր, մարտ	դաստ. աշխ. կազմ.	
13	Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական աշխատանքի:	ուստարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեն, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ	
14	Հիմք ընդունելով աշակերտների ցանկությունը և ծնողների համաձայնությունը՝ կազմակերպել նախասիրական պարապմունքներ տարբեր առարկաներից՝ կնքելով ծնողների հետ համապատասխան պայմանագիր:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուսումն. աշխ. գծով փոխտնօրեն	
15	**ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ** Օգնել դասղեկներին՝ կազմելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման:	սեպտեմբերի սկիզբ	տնօրեն	
ա.	Դասղեկներից պահանջել՝ աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, աշակերտների տալ հայեցի դաստիարակություն,	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ, դասվարներ	

	նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն, դաստիարակության հիմքում դնել հիմնական հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները:			
բ.	Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, դասվարներ	
գ.	Հետևողական աշխատանքների միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ,ուսում ն. աշխ. գծով փոխտնօրեն	
դ.	Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, դասվարներ	
ե.	Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ /բաղկացած 5-7 հոգուց/, ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	սեպտեմբեր	դասղեկներ, դասվարներ	
զ.	Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցիչ կապը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ	
16 ա.	**ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ** Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ,	
բ.	Դպրոցում ստեղծել տնօրինությանը կից գեղագիտական դաստիարակության խորհուրդ:	սեպտեմբեր	տնօրեն, դասղեկներ	
գ.	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ	

դ.	Կանաչապատել դասասենյակներն ու միջանցքները: Ստեղծել վահանակներ:	սեպտեմբեր	Դասղեկներ , ԴԱԿ	
17 ա.	**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ** Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության պայմաններում հարստացնել մարզական գույքով:	օգոստոս-սեպտեմբեր	տնօրեն, ֆիզղեկ	
բ.	Կանոնավոր կերպով անցկացնել առավոտյան լիցքային վարժությունները, առողջարարական դասամիջոցները և մարմնամարզական րոպեները:	ուստարվա ընթացքում	ԴԱԿ, ֆիզղեկ	
գ.	Ստեղծել մարմնամարզական խմբակներ տարբեր մարզաձևերից:	սեպտեմբեր	տնօրեն, ուսուցիչներ	
դ.	Դպրոցական բուժքրոջ միջոցով պարզել աշակերտների առողջական վիճակը, ստեղծել ֆիզկուլտուրայի հատուկ խմբեր, հետևել պարապմունքների անցկացմանը:	սեպտեմբեր	Տնօրեն, դպրոցի բուժքույր	
ե.	Կազմակերպել սպորտլանդիաներ կրտսեր և միջին դպրոցում:	նոյեմբեր-ապրիլ	ֆիզկուլտուրայի ուսուցիչ	
զ.	Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզական նորմատիվների հանձնում:	սեպտեմբեր-մայիս	տնօրեն, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, բժիշկ /բուժքույր/	
է.	Անցկացնել միջդասարանական, միջդպրոցական մրցումներ: Դրանք կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին:	հոկտեմբեր մայիս	ԴԱԿ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, դասղեկներ	
ը.	Դպրոցին կցված բուժքրոջ և տեղամասի բժշկի օգնությամբ անցկացնել բժշկական միջոցառումներ	ուստարվա ընթացքում	տնօրեն	
թ.	Խստորեն վերահսկել ֆիզկուլտուրայի դահլիճում, ուսումնական արհեստանոցներում, լաբորատորիաներում	մշտապես	տնօրեն, կաբինետի վարիչ, ուսուցիչներ	

	անվտանգության և սանիտարական կանոնների պահպանումը:			
ժ.	Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգիենային, պահպանել դասացուցակների կազմման և տնային աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները:	մշտապես	ուսումն. գծով փոխտնօրեն	
ի.	Ուսումնական տարվա սկզբին և վերջում մանկավարժական խորհրդի նիստերում լսել դպրոցին կցված բուժքրոջ հաշվետվությունը՝ աշակերտների առողջական վիճակի և բուժական միջոցառումների իրականացման արդյունքների մասին:	սեպտեմբեր -մայիս	դպրոցական բժիշկ /բուժքույր/	
լ.	Բժշկի կամ բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց բարձր դասարանների սովորողների օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի մասին:	ուստարվա ընթացքում	դպրոցական բժիշկ /բուժքույր/	
խ.	Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել «Առողջության օր»: Դպրոց հրավիրել բժիշկների՝ տարբեր մասնագիտությունների գծով: Կազմակերպել զրույց-զեկուցումներ աշակերտների շրջանում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ , բժիշկ /բուժքույր/	
18 ա.	**ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ** Կազմակերպել հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հայկական բանակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ:	ուստարվա ընթացքում	զինղեկ, պատմության ուսուցիչ	
բ.	Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին:	սեպտեմբեր մայիս	ԴԱԿ, զինղեկ, դասղեկներ	
գ.	Անցկացնել «Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում» միջոցառումը:	մարտ	տնօրեն, զինղեկ	
19	**Աշխատանքային դաստիարակություն**	ուստարվա ընթացքում	տնօրեն, ԴԱԿ , ուսուցիչներ,	

ա.	Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշախատանքների որակը: Կարգի բերել արհեստանոցները /մետաղամշակման, փայտամշակաման, կարի, խոհարարական/:		դասղեկներ	
բ.	Դպրոցամերձ հողամասի,այգու մշակման և ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտների միջոցավ, սեր արթնացնել աշխատանքի հանդեպ:	ուստարվա ընթացքում	ուսուցիչներ, հողամասի վարիչ	
գ.	Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամքը: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույսերով կահավորեն կաբինետները, միջանցքներն ու սրահները:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, ԴԱԿ	
20 ա.	**ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ** Օգնել գրադարանավարին՝ կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը:Կառավարման ավտոմատացման համակարգում ժամանակին կատարել պահանջվող աշխատանքները:	օգոստոս	տնօրեն, գրադարանավար	
բ.	Դպրոցի հնարավորություններից ելնելով՝ հարստացնել գրադարանային ֆոնդը: Վերանորոգել գրադարանային ֆոնդի դասագրքերն ու գրքերը:	ուստարվա ընթացքում, մշտապես	տնօրեն, գրադարանի վարիչ	
գ.	Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ:	ուստարվա ընթացքում	գրադարանի վարիչ	
դ.	Ստեղծել «Պատանի ստեղծագործողի» ակումբ: Նպաստել երեխաների ստեղծագործական մտքի զարգացմանը: Ի հայտ բերել տաղանդավոր աշակերտներին:	ուստարվա ընթացքում	գրականության ուսուցիչներ, գրադարանի վարիչ	
ե.	Աշակերտներին բաժանորդագրել մանկապատանեկան ամսագրերին և թերթերին:	ուստարվա ընթացքում	գրադարանի վարիչ, դասղեկ	
զ.	Ստեղծել թեմատիկ	ուստարվա	գրադարանի	

	քարտարաններ, ղեկավարել կրտսեր դպրոցի ընթերցանությունը:	ընթացքում	վարիչ	
է.	Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր:	սեպտեմբեր	տնօրեն, գրադարանի վարիչ	

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
ԲԱԺԻՆ 4

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1 ա. բ.	Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրինության նիստ, վերլուծել շաբաթական պլանները. լսել տնօրինության անդամների հաղորդումը շաբաթական պլանների կատարողականի մասին:Բացահայտել աշխատանքում տեղ գտած թերությունները: Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
2	Ուսումնական տարվա սկզբից ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան:	ուստարվա ընթացքում	ուսումն. գծով փոխտնօրեն	
3	Հետևել, որ դասաժամերի բացթողումները լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով:	մշտապես	ուսումն. գծով փոխտնօրեն	
4	Ուսումնական տարվա սկզբից կատարել աշխատանքի բաժանում՝ որոշակի դարձնելով յուրաքանչյուրի աշխատանքի շրջանակները:	օգոստոսի վերջ	տնօրեն	
5	Ստուգել և հաստատել	սեպտեմբերի	տնօրեն, ուսումն.	

	ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները:	սկիզբ	գծով փոխտնօրեն	
6	Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը:	մշտապես	տնօրեն, ուսումն. գծով փոխտնօրեն	
7	Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ մանկավարժական խորհրդում:	սեպտեմբեր	տնօրեն, ուսումն. գծով փոխտնօրեն	
8ա.

	նիստերում:		ղեկավար	
12	Ստուգել դասամատյանների, աշակերտական օրագրերի ու տետրերի վարման վիճակը:	շաբաթը մեկ անգամ	ուսումն. աշխ. գծով փոխտնօրեն, դասղեկներ	
13	Ստուգել վատ սովորող աշակերտների հետ տարվող աշխատանքները, քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում:	հոկտեմբեր մարտ	ուսումն. աշխ. գծով փոխտնօրեն, դասղեկներ	
14	Գիտելիքների ստուգում կազմակերպել տարրական դպրոցում/1-4-րդ դասարաններում/:	դեկտեմբեր ապրիլ	ուսումն. աշխ. գծով փոխտնօրեն, մ/մ նախագահ	
15	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել դասղեկների մեթոդմիավորումում, տնօրինության ընդլայնված նիստում:	ուստարվա ընթացքում	ուսումն. աշխ. գծով փոխտնօրեն, մ/մ նախագահներ	

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ
ԲԱԺԻՆ 5

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:	սեպտեմբեր	տնօրեն, դասղեկներ	
2	Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև ծառացած՝ համատեղ լուծման ենթակա հարցերը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ծնողխորհրդի նախագահ, դասղեկներ	
3	Ծնողական համայնքի ֆինանսական աջակցությամբ հարստացնել դպրոցի արտաբյուջետային միջոցները: Խորհրդի որոշմամբ այդ միջոցները նպատակաուղղել դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանը, նորարարական և փորձարարական աշխատանքների	սեպտեմբեր, ուստարվա ընթացքում	տնօրեն, ծնողական խորհուրդ, դպրոցական խորհուրդ	

	կազմակերպմանը:			
4	Կազմել ծնողների համար անցկացվող զրույցներ և զեկուցումների թեմատիկ պլան:	սեպտեմբեր	տնօրեն,ծնողական խորհուրդ	
5	Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները:	սեպտեմբեր	տնօրեն, ծնողխորհուրդ	
6	Հաստատության գործունեությամբ շահագրգռված անձանցից ստեղծել հոգաբարձուների խորհուրդ:	սեպտեմբեր	տնօրեն	
7	Նպաստել ծնողական խորհրդի գործունեությանը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ	
8	Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը՝ սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ , ծնողական խորհուրդ	
9	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքներին:	մշտապես	ԴԱԿ, դասղեկներ , ծնողական խորհուրդ	

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

ԲԱԺԻՆ 6

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Կազմել տարիֆիկացիա:	սեպտեմբեր	տնօրեն	
2	Կազմել ծախսերի նախահաշիվ, քննարկել դպրոցի խորհրդում և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական բաժին:	ուստարվա ընթացքում	հաշվապահ, դպրոցական խորհուրդ	
3	Արտաբյուջետային ծախսերի նախահաշիվը համաձայնեցնել դպրոցի կառավարման խորհրդի հետ:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
4	Ժամանակին դիմել մարզպետարանին և տեղական	ուստարվա ընթացքում	տնօրեն	

	ինքնակառավարման մարմիններին՝ շենքի վերանորոգման, գույքի ձեռք բերման նպատակով համապատասխան ֆինանսավորում ստանալու համար:			
5	Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուսուցիչներ	
6	Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում:	նոյեմբեր	Տնօրեն, հաշվապահ	
7	Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
8	Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը:	ուստարվա ընթացքում	Տնօրեն , զինղեկ	
9	Աշխատանք տանել կաբինետների և լաբորատորիաների կահավորման և, հարստացման, եղած գույքն ու սարքավորումներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:	մշտապես	կաբինետների և լաբորատորիաների վարիչներ	
10	Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ծնողխորհուրդ	
11	Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին:	ուստարվա ընթացքում	տնօրեն, կաթսայատան պատասխանատու անձ	

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ԲԱԺԻՆ 7

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ելնելով շենքային պայմաններից՝ ուսումնական պարապմունքները կազմակերպել ա.մեկ հերթով. բ. լրացուցիչ պարապմունքներ և առարկայական խմբակներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
2 ա. բ.	Կոմպլեկտավորել հետևյալ դասարանները կրտսեր դպրոցի դասարաններ հիմնական դպրոցի դասարաններ	ուստարվա ընթացքում	տնօրեն	
3	Նշանակել դասղեկներ և դասարաններ:	օգոստոս	տնօրեն	
4	Նշանակել ուսումնական կաբինետի վարիչներ:	օգոստոս	տնօրեն	
5	Նշանակել և մանկավարժական խորհրդին ներկայացնել առարկայական մասնախմբերի նախագահներին:	20.08-30.08	տնօրեն, մանկավարժական խորհուրդ	
6	Նշանակել և հրամանագրել դասղեկներին, արտադասարանական վճարովի խմբակների ղեկավարներին:	օգոստոս	տնօրեն	
7	Ստեղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ՝ վերը նշված կառույցներում աշխատանքները նորմալ կազմակերպելու համար:	մշտապես	տնօրեն	
8	Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն:	մշտապես	տնօրեն,	
9	Նշանակել ավագ հերթապահներ, պահանջել հերթապահներից՝ . Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքերում: . Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը: . Օրվա վերջում աշխատանքային	մշտապես	ԴԱԿ, դասղեկներ , ուսումն. աշխ. գծով փոխտնօրեն	

	գործընթացի մասին զեկուցել տնօրենին:			
10	սահմանել կարգ. 1. Յուրաքանչյուր աշխատող աշխատանքի ներկայանա դասերն սկսելուց 15 րոպե առաջ՝ ըստ «Աշխատանքի ժամանակացույցի»՝ հիմք ընդունելով «ներքին կարգապահական կանոնները»: Ուսուցիչների հաճախումների հաշվառման պարտականությունները դնել փոխտնօրենի վրա:	մշտապես	տնօրեն, ուսումն. աշխ. գծով փոխտնօրեն	
11	Սահմանել վարչասպասարկող անձնակազմի աշխատանքային ռեժիմը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
12	Հետևել, որպեսզի դասղեկները և կաբինետի վարիչները պատասխանատվություն կրեն գույքի և անվտանգության կանոնների պահպանման համար:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
13	Դպրոցական շենքը էլեկտրական հոսանքով ապահովելու, էլեկտրական գծերն ու սարքավորումները անվտանգ պահելու պատասխանատվությունը դնել դպրոցի տնտեսական գծով փոխտնօրենի վրա:	մշտապես	տնօրեն	
14	Դպրոցամերձ հողամասի ծառերի պահպանման և խնամքի աշխատանքները դնել տեխնոլոգիայի ուսուցիչների վրա	մշտապես	ԴԱԿ, տեխնոլոգիայի ուսուցիչներ	
15	Դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նախապատրաստել նոր ուստարվան:	օգոստոս	տնօրինություն	
16	Վերանորոգել աշակերտական դասագրքերը:	հունիս օգոստոս	դասղեկներ, գրադարանի վարիչ	
17	Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները՝ ըստ դպրոցի աշակերտական կանոնադրության:	սեպտեմբեր	Տնօրեն, դասղեկներ	
18	Կատարել դասաբաշխում	օգոստոս	տնօրեն	
19	Հաշվառել գրադարանային ֆոնդի օգտագործման պիտանի դասագրքերը:	հունիս	գրադարանի վարիչ	
20	Օգտագործման ենթական դասագրքերը անվճար տալ ծնողներին,աշակերտներին; /1-9-րդ	օգոստոս սեպտեմբեր	գրադարանի վարիչ,դասղեկ	

	դաս. անվճար/:			
21	Կազմակերպել խորհրդատվական պարապմունքներ ամառային առաջադրանքներ ստացած աշակերտների հետ, ժամանակին և կազմակերպված ընդունել ամառային առաջադրանքները,վերաքննություն ները;	22.08-30.08 22.08-30.08	Ուսումն. աշխ. գծով փոխտնօրեն	
22	Դպրոցական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվան:	25.08-30.08	տնօրեն, դասղեկներ, ուսումնաօժանդակ աշխատակիցներ	